ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2022 թվականի N 60-Ա

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ 7/6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակիցների պարգևատրման կարգը հաստատելու մասին» թիվ 7/6 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման հավելվածի վերնագրից հանել «ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ» բառերը,

2) որոշման հավելվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերում «եռամսյակ» բառը և դրա հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «ամիս» բառով և դրա հոլովաձևերով,

3) որոշման հավելվածի 11-րդ կետից հանել «կամ Պալատում աշխատել է երեք ամսից պակաս ժամկետով» բառերը:

2. Որոշման հավելվածի 9-րդ կետը՝ «Գլխավոր քարտուղարի կողմից» բառերից հետո լրացնել «տվյալ ամսվա պարգևատրման ֆոնդը հաստատելու վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:» բառերով:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ԲԱԽՉԱԳՈՒԼՅԱՆ